

ԼԵԿՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ԺԱՍՈՒՆԱԿԸ

Հովհաննես Իմաստասեր Օձնեցին կաթողիկոս օծվելուց հետո ձեռնամուխ է լինում հայոց տոնածիսական խնդիրների կարգավորմանը. «Քանզի տեսանեմ ի յոլովագոյն եւ ի ծանր իրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն ի ժողովրդականս, այլ առաւել յուխտի մանկունս, եւ առաջնորդս եկեղեցեաց: Որք մին լեզու ի ձեռն միոյ քարոզի ի մի ելաք ճշմարտութեան ճանապարհ, եւ արդ բազմահետք եւ բազմաշաւիղք եղաք, յանչափաբար եւ զանազան եւ այլաձեւսն առնելոյ՝ թէ զվարս եւ եթէ զփառաբանութիւնս որ առ աստուած: Մինչ գրեթէ զմոյն կրել զվնասս ըստ հնոյ պատմութեանն՝ պատերազմել մեզ այր ընդ եղբօր, եւ այր ընդ ընկերի, քաղաք ընդ քաղաքի եւ օրէնք ընդ օրէնս»¹:

Իսկ Հովհաննես Օձնեցու «Կանոնագրքի» 19-րդ կանոնում կարդում ենք. «..... եւ զսոցուն (կանոնների) խորհուրդ յառաջաբան անդ հաւաստեալ յայտնեցաք»²: Սա նշանակում է, որ «Առաջաբանը» և կանոնները մեկ ամբողջություն են եղել, որ հրատարակել են առանձին-առանձին՝ «Ատենաբանութիւն» ու «32 կանոնք» անվանումներով: Ասենք, որ նախնական բնագրում «Դարձեալ յաղագս կարգաց եկեղեցւոյն» վերնագիրը կրող հատվածը առաջաբանում է եղել, և այն նույնպես նվիրված է կանոնների խորհրդին: Դատելով առաջաբանի գլուխներից և հիշյալ հատվածից՝ «Առաջաբանը» բաժանված է եղել 20 գլխի:

Հարկ է նշել, որ Հ. Օձնեցին «Կանոնագիրք հայոց» ժողովածուն կազմելիս ընդգրկել է արդեն գոյություն ունեցող 32 կանոնները՝ ավելացնելով դրանց համառոտ ցանկը, որը պարզվում է Հ. Օձնեցու հիշատակարանից: Սա միաժամանակ նշանակում է, որ խորհուրդներ պարունակող «Առաջաբանը» և 32 կանոններն ավելի շուտ են գրվել քան «Կանոնագիրք հայոց»-ը, հավանաբար, նրա կաթողիկոս ընտրվելու տարում: Դա պարզվում է «ինձ տրված բարձր շնորհներով» արտահայտությունից, ինչպես և «Ատենաբանութեան» վերնագրերից, այն է՝ «Երանելոյ Տեառն Յովանիսի փիղիսոփայի հայոց կաթողիկոսի յառաջին կենցաղումն իւր եւ ի գալն յաթոռ հայրապետութեան եւ հաստատեալ բազմա-

¹ Յովհաննես Իմաստասերի Աւանեսոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 4-5:

² Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 524:

պատիկ եւ զանազան կարգս եւ կրօնս եկեղեցւոյ», «Պատմութիւն վասն իւր ըստ առաջնումն կենցաղին ուսումնասիրութեան միանգամայն եւ աստուածսիրութեան յաղագս Աստուծոյ առ նա խնամակալութեանն»³:

Կարծում ենք, որ քննարկվածից միանշանակ հետևում է, որ Զ. Օձնեցու գրած «Առաջաբանը»՝ խորհուրդներով հանդերձ, և 32 կանոնները մեկ ամբողջություն են կազմել, և այնտեղ տեղ գտած «Ընթերցուածոց հրաման»-ը վերաբերում է համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակին, որը փոխառված էր քրիստոնեական տոնացույցի երուսաղեմյան օրինակից:

Ուշագրավ է «Կանոնագիրք հայոց»-ի հետագա խմբագրություններից մեկի՝ թիվ 659 ձեռագրի կառուցվածքը, որտեղ Զ. Օձնեցու կանոններին նախորդել է «Նախահաւաքումն Պատմութեան այսմ բանից՝ Տեառն Զովհաննու վերծանաւորի» բնագիրը, որը հիշեցնում է Զ. Օձնեցու «Առաջաբանը»՝ խորհուրդներով հանդերձ, և 32 կանոնների կառուցվածքը: Սակայն այդ բնագիրը «Ընթերցուածոց հրաման»-ի մեկնություն է: Կարելի է մտածել, որ Զ. Օձնեցու տոնացույցն ունեցել է նույն կառուցվածքը: Նա սկզբից տվել է «Ընթերցուածոց հրաման»-ի մեկնությունը, որն ուշ խմբագրությամբ է մեզ հասել⁴, ապա՝ տոնացույցի իր տարբերակը, որն արմատական բարեփոխում էր հայոց տոնացույցում:

Զովհաննես Օձնեցին հեղինակել է նաև «Ի նոր Կիրակէին» ճառը, որտեղ ոչ միայն հիշեցնում է «Ընթերցուածոց հրաման»-ը՝ կապելով «Յակոբայ եղբար Տեառն» հրամանի հետ, այլև խմբագրած տոնացույցի կիրակի (Ձատկից - Պենտեկոստէ) օրերի մասին է փաստում: Բերենք այդ ուշագրավ վկայությունը:

«Իսկ յաստուածային գիշերն ոչ գտանեմք այսպիսի ասացեալ, այլ եթէ՝ հաներ զգիշերն ի գլուխ յաղաթսն Աստուծոյ: Վկայ են երուսաղեմացիք, որ մինչև ցայսար զմիաշաբաթին աւուր պայծառացուցանին գիշերապաշտութեամբ: Յակովբայ եղբար Տեառն հրամայեալ է նոցա, եւ ես իմոցս ի զնոյն հրամայեցի՝ Յովհան հայոց կաթողիկոսն՝ նորին հրամանին հետեւել և Առաքելական կանոնացն հնազանդել ի հաճոյս կամացն Աստուծոյ: Իսկ մեք յամենայն ար կիրակէի զնոյն ար յիշատակեմք եւ ի մեզ վերաբերելով և զոր ի նմա հանգիստ է Զրիստոսի երախտեալքն ի մեզ հաւատարմացուցանեմք»⁵:

3. Զովհաննու իմաստասերի Ամենեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 79:

4. Տե՛ս Ա. Յակոբեան, Յովհան Օձնեցու նորայայտ տոնացույցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու վերծանողի», Հանդէս Ամսօրեայ, 2004, էջ 92-130:

5. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 199, Հ. Քյոսեյան, «Ի խորհուրդ նոր կիրակէին» ճառը եւ նրա հեղինակը, Էջմիածին, 2006, էջ 41:

«Սակս ժողովոց ի հայս» բնագրում, որը հեղինակների մի մասը համարում է Հովհաննես Օձնեցունը, 726 թվականի Մանագլերտի ժողովի հատվածում Լ. ռաջավորաց պաիքը դրվում է Քառասնորդաց պաիքի մեջ, որը ուշ շրջանի հեղինակները վերագրում են Գրիգոր Արշարունուն: Մեզ հետաքրքրողն այն է, որ դեռևս 726 թվականին շարունակվում էր տոնացույցի խմբագրումը, որն սկսվել էր 717 թվականին, իսկ, ինչպես կտեսնենք, հիմնականում ավարտին է հասել 720 թվականին:

Հովհաննես Օձնեցու տոնացույցում կատարված բարեփոխումների ուշ շրջանի մատենագրական վկայությունների բնութայն անդրադարձել է Ռ. Վարդանյանը: Բերենք դրանք և որոշ հատվածների համար ավելացնենք մեր մեկնությունը:

3. Դրասխանակերտցու «Հայոց պատմության» մեջ կարդում ենք. «Սա իմաստասերն Հովհաննես կաթողիկոսը՝ գրով դրոշմեալ՝ տա եկեղեցւոյ Քրիստոսի զբավանդակ կարգաւորութիւնս պաշտման ժամուց, գեղեցիկ իմն յօրինակովք ճոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ կարգացն զմեկնութիւնս ի մխրարութիւն կղերց եկեղեցւոյ»⁶:

Ասողիկը գրում է. «Եւ զկնի նորա Տէր Յովհաննէս փիլիսոփայն ի գաւառէն Տաշրաց ի գեղջէ Օձնայ՝ ամս ժԱ: Սա արար ժողով ի Մանագլերտ քաղաք ի սահմանագլուխն Հարքայ ամենայն եպիսկոպոսօք հայոց, ընդ որս էր և Գրիգոր փիլիսոփայ քորեպիսկոպոս Արշարունեաց, և Զ եպիսկոպոս յԱսորոց Յակոբիկ տանէ՝ հրամանաւ պատրիարգին իւրեանց, յաւուրս Սմբատայ իշխանութեանն, սրբելով յաշխարհէս քաղկեդոնականացն երկաբնակ խոստովանութիւն և գաւառնդութիւն՝ որ խմորով և ջրով ապականին՝ զՍուրբ Խորիհուրդն, և ձկամբ և ձիթով և գինով՝ զպահս քառասնորդացն և զայլ աւուրս կանոնեալս, որ յաւուրցն Եգրի մինչև զայս մնացեալ էր յաշխարհիս Հայոց ի մասին Յունաց: Չայս ամենայն իբրև խմոր հին ի բաց ընկեցեալ՝ սահմանեցին խոստովանութիւն հաւատոյ՝ մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ և առանց խմորոյ և ջրոյ կատարել զՍուրբ Խորիհուրդն, և զպահոց աւուրս սրբութեամբ տանել ի գլուխ: Այլ վասն կարեաց հիւանդաց և մարմնասէր իշխանաց թուլացուցին զշաբաթ և զկիրակէ ոչ ուխտի մանկանց եկեղեցւոյ և ճգնաւորաց Քրիստոսի»⁷:

Կիրակոս Գանձակեցին վկայում է «Կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց գեկեղեցի՝ ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն Քալկեդոնի, որ յա-

⁶ Հովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 101, Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, էջ 198-199:

⁷ Ստեփանոսի իւրօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 102-103:

ուորցն Զերակլի կայսեր և Եզր կաթողիկոսի ունեւ անկարգութիւն աշխարհս Զայոց: Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիրողի և զամենայն տօնսն որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի, և տօնեցին ի ԻԵ Դեկտեմբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան տեառն տօնէին և երգեաց շարական հարցին՝ «Մեղաք յամենայն և զպատուիրանս քո ոչ պահեցաք արդ խոստովանիմք առ քեզ», որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցի հայոց, սկսեալ ի ԾԶԵ թուականէն մինչև ի ՈՂ թուականս (1241 թ.), որ այժմ յաւուրս մեր է: Եւ այսպէս կարգաւորեալ զաշխարհս ամենայն առաքինութեամբ, և ինքն վարդապետութեան և աղօթից պարապեալ: Շինէ և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օծուն, որ հուպ է առ քաղաքին Լօռէ, և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեալ ի գիւղէն՝ անդ դադարէ»⁸:

Ինչպէս «Սակս ժողովոց»-ի հեղինակը, այնպէս էլ Կիրակոս Գանձակեցին «Ընթերցուածոց հրամանի» խմբագրուող ղնում է 726 թվականին՝ Սանազկերտի ժողովի տարում:

Հովհան Օծնեցու շաբաթական շարքի վրա հիմնված «Ընթերցուածոց հրամանի» և «Տօնացոյց ըստ շաբաթուց»-ի ընդօրինակություններ են պահպանվել սկսած 13-րդ դարից:

Այժմ հիմնավորենք տոնացույցի՝ Հովհաննես Օծնեցու նոր խմբագրության ստեղծման ստույգ ժամանակը: Վերը տեսանք, որ «Սակս ժողովոց»-ի հեղինակը և Կիրակոս Գանձակեցին «Ընթերցուածոց հրաման»-ի բարեփոխումը ղնում են 726 թվականին՝ Սանազկերտի ժողովի տարում, իսկ Հ. Օծնեցու «Առաջաբանի» խորհուրդներից և կանոններից ենթադրեցինք, որ այն գրվել է նրա կաթողիկոսության առաջին տարիներին՝ ընդունենք 717 թվականին: Սակայն այդ կանոններում փաստվում են Քրիստոսի ծննդեան և Յայտնութեան տոնը հունվարի 6-ին կատարելու ավանդական կարգի վերականգնման մասին, այդ օրը ջրի օրհնություն կատարելու (26-րդ կանոն) և ծննդեան և Յայտնութեան կարգին՝ ութօրեքին, Մատթեոսի Ավետարանից ծննդեան և Մկրտութեան հատվածների ընթերցումը հավելելու վերաբերյալ: Այսինքն՝ խմբագրությունը դրվում է 717-726 թվականների սահմաններում: Սակայն առկա են կողմնակի վկայություններ, որոնց հաշվառումով որոշարկվում է 720 թվականը:

Հովհան Մամիկոնյանը բերել է Հովհաննես Մկրտչի և Աթանագիների նշխարների ձեռքբերման և տեղադրման պատմությունը և վկայում, որ Գրիգոր Լուսավորչը նրանց տոնը սահմանել է Նաւասարդի 1-ին:

⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 67-70.

Ու Վարդանյանը հիմնավորել է, որ Հ. Օձնեցին Հովհաննես Սկրտչի և Աթանազիների տոնը վերածել է շարժականի և դրել Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը՝ հինգշաբթի: Համադրելով Նաւասարդի 1-ը և Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը՝ հինգշաբթին՝ ստացել է հետևյալ արդյունքները՝ աղյուսակով:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթ- վա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսա- թիվ	Շաբաթ- վա օր
706	6	3	5	155	1	1	5
720	5	31	5	169	1	1	5
734	5	27	5	183	1	1	5

Առաջին և երրորդ թվականները քննությունից դուրս են մնում, որովհետև Հ. Օձնեցու կաթողիկոսության տարիներին չեն համապատասխանում, ուստի, մնում է միայն 720 թվականը՝ իբրև տոնացույցի հիմնական խմբագրման տարի:

Եվ իրոք: Հովհան Սամիկոնյանը յոթ խոտաճարակների նահատակության օրը նշել է Քաղոց 4-ով: Տօնապատճառները նրանց հիշատակի օրը դրել են սեպտեմբերի 30-ին, իսկ տոնացույցերն ունեն երկուշաբթի օրվա նշումը: Հայոց տոնարական եղանակով ստանում ենք Քաղոց 4-ը = սեպտեմբերի 30 երկուշաբթի = 720 թվական:

Այս հաշվարկները բերում են այն հետևության, որ Հ. Օձնեցին տոնացույցի նոր խմբագրությունը հիմնականում իրականացրել է 720 թվականին, իսկ մասնակիորեն խմբագրել է 717-ից 726 թվականներին: